# ԴՈՒ ՊԵՏՔ Է ՀՈՒՅՍ ՈՒՆԵՆԱՍ
# YOU ARE NEVER BEYOND HOPE

**2 SAMUEL 9:6-13**
**2 ԹԱԳ. 9:6-13**

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- David and Jonathan covenant. 2 Samuel 9:6-13

**“Thew are two different types of hope in this world. One is hoping for something and the other is hoping in someone.”** –**Pete Wilson**

«Այս աշխարհում կա երկու տեսակի հույս: Մեկը՝ հույսն է ինչ-որ բանի համար, իսկ երկրորդը՝ ինչ-որ մեկի հանդեպ»: –Փիթ Վիլսոն

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

**Մերիբաաղ, Merib-Baal, Fighter of Baal** – **Պատերազմող**
**(1 Մնաց. 8:34 - Եւ Յովնաթանի որդին՝ Մերիբաաղ. և Մերիբաաղը ծնեց Միքային:)**

**Մեմփիբոսթէ, Mephibosheth** — (Bib Heb: מְפִיבֹשֶׁת, **meaning** "**from the mouth of shame”Բերանի ամոթանք**

**Mica** – Who Is Like YHWH

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**(2 Թագ. 9:6-13)**

6 Եւ Սավուղի որդի Յովնաթանի որդի Մեմփիբոսթէն Դավիթի մօտ եկավ եւ երեսի վրա
ընկավ ու խոնարհութիւն արեց նրան: Եւ Դաւիթն ասեց. Ով Մեմփիբոսթէ. Եւ նա ասեց. Ահա
ծառադ: 7 Եւ Դավիթը նորան ասեց. Մի վախեցիր, որովհետեւ քո հայր Յովնաթանի սիրո
համար քեզ անպատճառ բարերարութիւն **(Գութը շարժվեց, ողորմություն)** պիտի անեմ, **եւ քո հօր
Սաւուղի բոլոր արտերը քեզ պիտի վերադարձնեմ,** եւ **դու պիտի միշտ իմ սեղանից
հաց ուտես:** 8 Եւ նա խոնարհվեց եւ ասաց. Ծառադ ո՞վ է որ ինձ պէս մի **մեռած շան** վրա
նայեցիր: 9 Իսկ թագաւորը Սավուղի ծառա Սիբային կանչեց, եւ նորան ասաց. Այն ամէնը, ինչ
պատկանում էր Սավուղին եւ նորա ամբողջ տանը, տալիս եմ քո ստացուածքը քո տիրոջ
որդուն: 10 Դու, քո որդիներն ու քո ծառաները կը մշակեք նրա հողը, եւ պտուղն իր մօտ բերես,
որ քո տիրոջ որդին ուտելու հաց ունենա. Եւ քո տիրոջ որդի Մեմփիբոսթէն պիտի միշտ իմ
սեղանից հաց ուտի: Եւ Սիբան տասնհինգ որդի եւ քսան ծառա ունէր: 11 Եւ Սիբան ասեց
թագավորին. Իմ թագավոր տէրս ինչ որ հրամայեց իր ծառային, այնպէս էլ կանի քո ծառան:
Բայց Մեմփիբոսթէն, ասեց Դավիթը, թագավորի որդկանց մէկի պէս իմ սեղանից հաց պիտի
ուտի: 12 Մեմփիբոսթէն ունէր մի փոքրիկ որդի, որի անունը Միքա էր. Եւ Սիբայի տան բոլոր
բնակիչները Մեմփիբոսթէի ծառաներն էին: 13 Մեմփիթոսթէն բնակվում էր Երուսաղէմում.
Որովհետեւ միշտ թագաւորի սեղանից հաց էր ուտում, **եւ նա երկու ոտքից կաղ էր:**

## I. ՄԵՆՔ ՎԵՐԱՊՐԵԼ ԵՆՔ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՑՈՒՄ ՈՉ ՈՔ ՄԵՂԱՎՈՐ ՉԻ ԵՂԵԼ. ՊԱՐԶԱՊԵՍ ԴԱ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԲԵՐՈՒՄՈՎ:

**WE HAVE EXPERIENCED SUFFERING THAT WAS NO ONE'S FAULT, BUT WAS DUE TO CIRCUMSTANCES.**

- **ԱՌԱՋԻՆԸ՝ ՄԵՄՓԻԲՈՍԹԵՆ և ՉԷՐ ԿԱՐՈՂ ՔԱՅԼԵԼ:**

  ***2 Թագ. 4:4 -*** *4 Եւ Յովնաթանը մի տղայ ունէր՝ ոտքերը կաղ, երբոր Սաւուղի եւ Յովնաթանի լուրը Յեզրայէլից եկաւ, նա հինգ տարեկան էր. Եւ նորա դայեակը նորան առաւ եւ փախաւ. Եւ երբոր շտապում էր փախչելու, տղան վայր ընկաւ եւ կաղ դառաւ, եւ նորա անունը Մեմփիբոսթէ էր:*

***Յոբ 17:15 -*** *15 Եւ հիմա ո՞ւր է իմ հոյսը. Եւ իմ հոյսը ո՞վ է տեսնելու:*

***Յով. 5:6-9 -*** *6 Երբ Յիսուսը տեսաւ նորան պառկած, եւ իմացաւ (**and learned**), և իմացաւ որ դա շատ ժամանակից ի վեր էր, նորան ասեց. **Կամենո՞ւմ ես առողջ լինիլ:** 7 **Հիվանդը պատասխանեց նորան. Տէր, ոչ ոք չունեմ, որ երբ ջրերը շարժվում է՝ ինձ աւազանի մէջ իջեցնի. եւ մինչեւ որ ես գալիս եմ, ուրիշն ինձանից աւելի առաջ է:** (**Ծառաղ ո՞վ է որ ինձ պէս մի մեռած շան վրա նայեցիր:**) 8 Յիսուսը նորան ասեց. Վեր կաց, մահիճդ առ եւ գնա: 9 Եւ մարդն իսկոյն առողջացաւ, վեր կացաւ վերցրեց իր մահիճը եւ ման էր գալիս.*

***1 Պետրոս 5:10*** *– Եւ բոլոր շնորհների Աստուածը, - որ ձեզ կանչեց իր հավիտենական փառքին Քրիստոս Յիսուսի միջոցով, որին մի փոքր ժամանակ չարչարակից պիտի լինէք, - **թող վերականգնի, զօրացնի, հաստատահիմն** դարձնի ձեզ:*

***Կող. 1:27 -*** *27 Աստուած կամեցաւ ցոյց տալ, թէ ինչ է այս խորհուրդի փառաւոր ճոխութիւնը հեթանոսներում, որ է Քրիստոսը ձեզանում՝ այն փառքի հոյսը:* ***Ինչպես Դավիթը Մեմփիբոսթյին***

## II. ՄԵՆՔ ՎԵՐԱՊՐԵԼ ԵՆՔ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՍԱԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ:

**WE HAVE EXPERIENCED SUFFERING THAT WAS DIRECTLY DUE TO THE SINFUL ACTIONS OF OTHERS.**

- **Մեմփիբոսթեն ապրում էր աքսորավայրում, քանի որ Սավուղ թագավորը նրա պապն էր: Սավուղը որոշեց լինել Դավթի թշնամին: Այս հանգամանքը Մեմփիբոսթեի վերահսկողությունից դուրս է:**

- **«Սպասելը ցավոտ է: Մոռանալը ցավոտ է: Բայց չհասկանալը, թե ի՛նչ որոշում է պետք կայացնել, կարող է երբեմն ամենացավոտը լինել...»** Խոսե Ն. Հարիս — Jose N. Harris,

## III. ՄԵՆՔ ՎԵՐԱՊՐԵԼ ԵՆՔ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՄԵՐ ԻՍԿ ՍԽԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ:

**WE HAVE EXPERIENCED SUFFERING THAT WAS DUE TO OUR OWN POOR CHOICES.**

*8 Եւ նա խոնարհվեց եւ ասաց. Ծառաղ ո՞վ է որ ինձ պէս մի **մեռած շան** վրա նայեցիր:*

1. Մեմփիբոսթեն ապրում էր **Լադաբարում,** ինչը կարող է թարգմանվել որպես **«ոչ մի հաղորդակցություն»**, **«ոչ մի խոսք կամ կապ»**, **«ոչ մի արոտ»:**

2. Ոչ ոք չէր հարկադրել նրան ապրել այնտեղ, որտեղ նա ապրում էր: նա ինքն էր որոշել դա, զուտ վախի կամ ամոթի պատճառով:
3. Մեմփիբոսթեի կյանքի ընթացքում կար երկու գործոն, որոնք մշտապես հուսահատ վիճակում էին պահում նրան. ամոթը և մեղքի զգացումը:

**Մեղքի զգացումն ասում է.** «Ես սխալ եմ գործել», **իսկ ամոթը՝** «Ես սխալ եմ»: Ամոթը խաբեությամբ դրդում է հավատալ, որ ես արժանի եմ կապանքների մեջ լինել մինչև իմ կյանքի ավարտը:

Եվ ամոթը, և մեղքի զգացումը կարող են թույլ չտալ ինձ տեսնել այն հույսը, որն իմ առջև է:

**«Վստահիր անցյալն Աստծո ողորմությանը, ներկան՝ Նրա սիրուն, և ապագան՝ Նրա նախախնամությանը» –Օգոստինոս Երանելի**

**“Trust the past to the mercy of God, the present to His love, and the future to His providence.” –Augustine of Hippo**

## ԱՄՓՈՓՈՒՄ

**I. THE CHOICES OF OTHERS NO LONGER WERE HELD AGAINST HIM.
ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՅԼևՍ ՉՊԱՀՎԵՑԻՆ ՆՐԱ ԴԵՄ:**

**II. HE WAS SET FREE FROM HIS OWN POOR CHOICES.
ՆԱ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ ԻՐ ՍԽԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ**

**III. THE KING RESTORED HIM.
ԹԱԳԱՎՈՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑ ՆՐԱՆ**

Ներիր քեզ:

Ի՞նչ հանգամանք է դրդել քեզ անհուսություն զգալ:

What are the things that you’re clinging to from your past that have come to define who you are today?

Արդյո՞ք ձեր անցյալում եղել են այնպիսի բաներ, որոնք դուք այսօր բաց չեք թողնում և որոնք դարձել են ձեր ինքնության մասը: